

եւ ամենայն նախարարաց աշխարհին Յայոց՝ յուղարկէին առ կայսր եւ առ այլ ամենայն յառաջագրեալսն¹ աւագանին Յայոց:

ԼՂ. Եւ սպարապետն Յայոց տերն Մամիկոնեից երանելին Վարդան, առեալ ընդ իւր ի տանուտերացն Յայոց, որք ջերմեռանդն² սիրով ճեպէին մարտիրոսութեան ժամուն պատահել, որք էին այսոքիկ. Խորէն Խորխոռունի³, Արշաւիր Կամսարական, եւ Թաթուլ Դիմաքսեան⁴, եւ Արտակ Պալունի, եւ Գիւտն Վահեւունեաց⁵, եւ Յմայեակ Դիմաքսեան, եւ այլ տանուտեարք եւ սեպուիք, եւ բազումք ի զաւրացն Յայոց, որք ինքնայաւժար⁶ փութով փափագէին լինել վրէժխնդիր ուխտի սուրբ եկեղեցւոյ, եւ տալ զանծինս ի մահ ի վերայ սուրբ եւ ճշմարիտ⁷ հաւատոյն Քրիստոսի. եւ այլ գունդք ի զաւրացն Մարդապետական⁸ այրուծիոյ, փոյթք ի գործ պատերազմին առաքիսութեան. զորս եւ չարախորհուրդ իշխանին Սիւնեաց Վասակայ ծանուցեալ ոչ հաւանս իւրոյ չար մտածութեանն՝ կազմեալս առաքեր ընդ նմա. եւ զորոց գիտեր զհոլովումս ի վատթար կողմս, եւ ոչ ուղղակի ի խորհուրդ ուխտապահութեանն՝ ի տանուտերացն⁹ Յայոց եւ ի սեպիացն, որք էին երեւելագոյնք, եւ յայլ ռամիկ բազմութենէն՝ զայնս արգելեալ առ իւր պահեր:

2 Եւ հրաժարեալ երանելի զաւրավարն Յայոց տերն Մամիկոնեից Վարդան, հանդերձ ընկերակցաւքն իւրովք եւ այլ զաւրուն արամբք որ էին ընդ նմա, յիշխանէն Սիւնեաց Վասակայ եւ յայլ մնացելոցն ընդ նմա աւագանւոյն՝ ողջախորհուրդ մտաւք գնային ի գործ պատերազմի: 3 Եւ մտեալ ի տուն Տեառն, որ է սուրբ եկեղեցի, երկիր պագանել տեառն Աստուծոյ ամենակալի, առեալ զսուրբ Աւետարանն եւ զնշան կենսատու խաչին՝ ողջուներ, դնելով անյագ ի վերայ բբաց աչացն եւ ճակատու: 4 Չնոյն առնէին ջերմեռանդն սիրով եւ որք ընդ նմայն էին ամենեքեան. եւ ողջամբ գնային ամենեքեան յորդորմամբ¹⁰ սիրոյ: 5 Եւ չեւ եւս հեռացեալք, տեսաներ¹¹ աւթեւանս¹² ոչ բազումս յԱյրարատոյ երանելի սպարապետն Յայոց Վարդան¹ եւ

1 ՏՏ. յառաջագրեալ

2 ՏՏ. ջերմեռանդ

3 ՏՏ. խորխոռունի

4 ՁԱՄ. դիմակսեան

5 Ձ. եւ գունդն վահեւ...

6 Ձ. որ ինքնայոժար

7 ՏՏ. սուրբ ճշմարիտ

8 Ձ. մարդապետական

9 Ձ. ի տանուտերանցն

10 Ձ. յորդորմամբ

11 Փակագծի մէջ դրինք (ք, տեսաներ), որ աղաւաղութիւն է թւում:

12 ՁՏՏ. եւ չեւ եւս հեռացեալք, տեսաներ օթեւանս եւն. ԲԳՄ. ունին ծանօթութիւն՝ «Խառնակ կամ պակաս է ի բանիդ»